ԱՆԺԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կյանքից հեռացավ ինստիտուտի երկար տարիների գիտաշխատող, կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ Անժիկ Մանուկյանը (1942-2016): Նրա աշխատանքային գործունեությունը ինստիտուտում սկսվել է 1972 թ., երբ ՀՀ ԳԱ հաշվողական կենտրոնի մի խումբ աշխատակիցներ տեղափոխվեցին լեզվի ինստիտուտ:

Ա. Մանուկյանը ավարտել էր Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացել ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բնագավառում, աշխատանքի անցնել ԳԱ հաշվողական կենտրոնում:

Նա մեծ ներդրում ունի ժամանակակից հայերենի բառապաշարի և քերականական կառուցվածքի հաշվարկային (ձևային) ուսումնասիրության բնագավառում, որը մեզանում սկիզբ առավ 70-ական թթ.: Տարիների ընթացքում նա գրեց բազմաթիվ գիտական հոդվածներ նվիրված ռուսերենի բառափոխման համակարգի առանձնահատկությունների ձևային նկարագրությանը, մշակել է ռուսերենի բառափոխման կաղապարները, կազմել է ալգորիթմները և փորձարկել ժամանակակից հաշվողական մեքենաների օգնությամբ: Նա հաջողությամբ իրականացրել է ժամանակակից հայերենի գիտելիքների բանկի ստեղծումը, ինչպես նաև բառարանային տվյալների բացահայտման և նկարագրության, բառակազմական կաղապարների մշակման աշխատաքները: Այս բնագավառում նա գրեց գիտական մի քանի տասնյակ հոդվածներ, հանդես եկավ տարբեր զեկուցումներով:

Լինելով տեխնիկական գիտությունների թեկնածու Ա. Մանուկյանը հայերենի կառուցվածքի մաթեմատիկական ուսումնասիրության բնագավառում աչքի ընկնող մասնագետ էր, ըստ ամենայնի տիրապետում էր լեզուների ձևային նկարագրության միջազգային փորձին և համապատասխան նվաճումներին:

Երկար տարիներ Ա. Մանուկյանը ղեկավարեց ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը ունենալով ներդրում ոչ միայն գիտական ձեռքբերումների, այլև կադրերի պատրաստման բնագավառում:

Ա. Մանուկյանը ինստիտուտի սիրված աշխատակիցներից էր, միշտ նախաձեռնող, որևէ հարցի քննարկմանը մասնակից, միշտ պատրաստակամ, գործընկերներին խորհուրդներով և նկատառումներով օգնող: Նրա հիշատակը մնալու է ԳԱԱ բնական և հասարակական գիտության աշխատողների սրտերում: